**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**

**N ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-3**

24 հունիսի 2025թ.

ք. Հրազդան

**Հրազդանի համայնքապետարանը**, ի դեմս համայնքի ղեկավար Ս.Միքայելյանի, որը գործում է հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և **«ԱՎԱԳ ՇԻՆ1» ՍՊԸ-ն և «ԱՆՆԱՐ» ՍՊԸ-ն, ի դեմս կոնսորցիումը**, ի դեմս լիազորված անձի **«ԱՎԱԳ ՇԻՆ1» ՍՊԸ-ի** տնօրեն Հ. Ավագյանի, որը գործում է համատեղ գործունեության կազմելու մասին թիվ N 4-2025 պայմանագրի հիման վրա 21.04.2025թ.-ին ստորագրված համատեղ գործունեության կազմելու մասին թիվ N 4-2025 պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, միասին այսուհետ՝ Կողմեր կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի սահմանված աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 120 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով :

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝**

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների կատարումը համաձայն 21.04.2025թ.-ին ստորագրված համատեղ գործունեության կազմելու մասին թիվ N 4-2025 պայմանագրի, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ տեխնիկական բնութագրին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված երեք տարի՝ 1-ին չափաբաժնի համար և մեկ տարի՝ 2-րդ չափաբաժնի համար: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի [illegible] ամենօրյա ռեժիմով ապահովել է

քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 37.995.000 (երեսունյոթ միլիոն ինը հարյուր իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից 6.332.500 (վեց միլիոն երեք հարյուր երեսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

՝ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական պահանջների, այդ թվում կլիմայի փոփոխության հետ անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը |
|---|---|---|
| 1 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 2 | Տեղամասերում շինարարական աղբը կուտակված է, թափոնները չեն տեղափոխվել հատուկ հատկացված վայրեր | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |
| 3 | Կապալառուի ճամբարում կամ աշխատանքային բազայում առկա չեն սանիտարական պայմաններ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0.5 տոկոսի չափով |

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո լրացուցիչ համաձայնագրի դատորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից [illegible] պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պատվիրատու կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը, տեղեկացնում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կապալառուի

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասն աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**

ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114

/ստորագրություն/Կ.Տ
**Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ և «ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
**կոնսորցիում**
**«ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Տիգրան մեծի 32
Բանկը՝ «Ամիօբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 115001960299227
ՀՎՀՀ՝ 03017559
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1»**
ք. Հրազդան, ՔԱՂԱՔ 4 ԹՂՄ., 88.
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2476402233080000
ՀՎՀՀ՝ 03024889

/ստորագրություն/Կ.Տ
**ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ Հ. ԱՎԱԳՅԱՆ**

Հավելված N 1

24 հունիսի 2025թ. կնքված

«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-3» ծածկագրով պայմանագրի

# ՀՐԱԶԴԱՆ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՐԱԶԴԱՆ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՇԵՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԱՇԽԱՏԱՍԵՆՅԱԿՆԵՐԻ, ԴԱՀԼԻՃԻ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ, ՍԱՆՀԱՆԳՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՁԵՎԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼԱԹԵՐԹԸ

| Հ/հ | Աշխատանքների և ծախսերի անվանումը | Չ//մ | Քանակը | Միավորի արժեքը, հազ.դրամ | Ընդհանուրը, հազ.դրամ |
|---|---|---|---|---|---|
| | | 3 | 4 | 5 | 6 |
| 1 | 2 | | | | |
| | **I. Համաշինարարական աշխատանքներ** | | | | |
| | **1. Քանդման աշխատանքներ** | | | | |
| 1 | Թեթև բետոնե բլոկներից միջնորմների քանդում 120-150մմ հաստությամբ (275մ²) | մ³ | 37,00 | 15 320,88 | 566 872,64 |
| 2 | Մանրահատակի քանդում | մ² | 417,00 | 1 107,99 | 462 030,03 |
| 3 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ | մ² | 417,00 | 1 039,54 | 433 488,31 |
| 4 | Խեցեսալե հատակների քանդում | մ² | 102,00 | 874,86 | 89 235,64 |
| 5 | Ցեմենտավազե հարթաշերտի քանդում H=40մմ | մ² | 102,00 | 1 039,54 | 106 033,11 |
| 6 | Պատերի քերքետում | մ² | 792,00 | 823,83 | 652 472,01 |
| 7 | Դռների ապամոնտաժում | մ² | 52,00 | 2 366,65 | 123 065,89 |
| 8 | Դռան բացվածքի իրականացում առկա պատերում սղոցման եղանակով (13.7մ²) | մ³ | 8,20 | 37 378,19 | 306 501,13 |
| 9 | Շինաղբի մաքրում և դուրս բերում շենքից | տ | 130,00 | 3 336,50 | 433 745,60 |
| 10 | Շինաղբի բարձում մեխանիզմով ա/ինքնաթափի վրա | տ | 120,00 | 1 976,34 | 237 161,13 |
| 11 | Նույնը, ձեռքով | տ | 10,00 | 1 482,89 | 14 828,91 |
| 12 | Տեղափոխում թափոնակույտ 5կմ | տ | 130,00 | 2 470,43 | 321 155,70 |
| | **Ընդամենը 1՝** | | | | **3 746 590,09** |
| | **2. Միջնապատեր** | | | | |
| 1 | 600մմ հաստությամբ միջնապատերի հատվածում բացվածքների փակում 400x200x150մմ թեթև բետոնե բլոկներից (38.7մ²) | մ³ | 5,80 | 39 332,74 | 228 129,91 |
| 2 | Շարվածքի ամրանավորում | տ | 0,05 | 121 330,52 | 6 309,19 |
| 3 | Ամրան A500C դասի (Φ8) | տ | 0,02 | 501 661,41 | 12 039,87 |
| 4 | Ամրան A500C դասի (Φ10) | տ | 0,03 | 529 352,79 | 14 821,88 |
| 5 | Ամրանավորված անցքերի լցափակում B12.5 դասի մանրախիճ բետոնով | մ³ | 0,39 | 50 167,38 | 19 565,28 |
| 6 | Հերմետիկ առաձգական ներդիրներ d=20մմ փրփրապլաստից | մ² | 5,30 | 804,61 | 4 264,44 |
| 7 | Ներդիր էլեմենտներ 100x63x6մմ անկյունակներից | տ | 0,06 | 1 092 722,63 | 63 377,91 |
| 8 | Միաձույլ ե/բ բարավորներ B12.5 դասի բետոնից (12.8գծմ) | մ³ | 0,42 | 113 653,66 | 47 734,54 |
| 9 | Ամրան AcI դասի (Φ6) | կգ | 8,40 | 449,24 | 3 773,65 |
| 10 | Ամրան A500C դասի (Φ12) | կգ | 33,60 | 499,56 | 16 785,18 |
| | **Ընդամենը 2՝** | | | | **416 801,85** |
| | **3. Միջնորմներ** | | | | |
| 1 | Միջնորմների շարվածք 400x200x100մմ թեթև բետոնե բլոկներից (421.8մ²) | մ³ | 42,18 | 46 220,19 | 1 949 567,54 |
| 2 | Շարվածքի ամրանավորում | տ | 0,58 | 121 330,52 | 70 857,02 |
| 3 | Ամրան A500C դասի (Φ8) | տ | 0,27 | 501 661,41 | 134 445,26 |
| 4 | Ամրան A500C դասի (Φ10) | տ | 0,32 | 529 352,79 | 167 275,48 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 5 | Միջնորմների ամրակապում պատերի և առաստաղի հետ ներդիր էլեմենտներով 100x63x6մմ անկյունակով | տ | 0,63 | 1 092 722,63 | 688 415,25 |
| 6 | Հերմետիկ առաձգական ներդիրներ d=20մմ փրփրապլաստից | մ² | 46,00 | 804,61 | 37 012,10 |
| 7 | Ամրանավորված անցքերի լցափակում B12.5 դասի մանրախիճ բետոնով | մ³ | 3,00 | 50 167,38 | 150 502,15 |
| 8 | Միաձույլ ե/բ քարավորներ B12.5 դասի բետոնից (18գծմ) | մ³ | 0,36 | 113 653,66 | 40 915,32 |
| 9 | Ամրան AcI դասի (Φ6) | կգ | 6,60 | 449,24 | 2 965,01 |
| 10 | Ամրան A500C դասի (Φ12) | կգ | 32,00 | 499,56 | 15 985,89 |
| | **Ընդամենը 3՝** | | | | **3 257 941,01** |
| | **4. Հատակներ (5÷7-րդ հարկեր)** | | | | |
| 1 | Ջրամեկուսացում 2 շերտ իզոգամով | մ² | 102,80 | 8 103,35 | 833 024,82 |
| 2 | Ցեմենտավազե շաղախից հարթաշերտ H=40մմ | մ² | 520,40 | 2 405,12 | 1 251 626,07 |
| 3 | Լամինատե հատակ շրիշակների տեղադրմամբ, գոլորշամեկուսիչ շերտով (պլաստմասսայե շրիշակ H=70մմ, L=380մ) | մ² | 505,10 | 8 494,76 | 4 290 703,88 |
| 4 | Հատակների երեսպատում խեցեսալերով, սոսնձով | մ² | 102,80 | 10 970,85 | 1 127 803,73 |
| 5 | Գոյություն ունեցող մանրահատակի հղկում (վերին շերտի հեռացում) մեխանիկական եղանակով | մ² | 33,40 | 1 780,61 | 59 472,50 |
| 6 | Մանրահատակի երկշերտ լաքապատում | մ² | 33,40 | 704,75 | 23 538,69 |
| | **Ընդամենը 4՝** | | | | **7 586 169,68** |
| | **5. Դռներ** | | | | |
| 1 | Մետաղապլաստե բլոկով կաղնեգույն պրոֆիլներից խուլ դռներ, ներառյալ սարքերը (6 հատ) | մ² | 11,03 | 55 104,31 | 607 800,52 |
| 2 | Մետաղապլաստե բլոկով սպիտակ պրոֆիլներից խուլ դռներ, ներառյալ սարքերը (18 հատ) | մ² | 29,34 | 44 083,45 | 1 293 408,32 |
| 3 | Ներքին, ՄԴՖ-ով դռների տեղադրում (21 հատ) | մ² | 1,94 | 9 433,99 | 18 301,93 |
| 4 | Փայտե կարկասով, ՄԴՖ-ով երեսպատված խուլ, դռների արժեքը, ներառյալ բռնակները, փականները | մ² | 38,61 | 59 300,16 | 2 289 579,28 |
| 5 | Ներքին, որակյալ, փայտե, խուլ երկփեղկ դուռ, ներառյալ փայտե 300մմ լայնությամբ շրջանակը, երկշերտ լաքապատված, բռնակներով և փականով | մ² | 4,49 | 178 167,42 | 799 971,73 |
| 6 | Պլաստմասսայե կաղնեգույն լուսամուտագոգեր B=400մմ (ֆինանսական բաժնում) (13.6+18) գծմ | մ² | 12,64 | 23 007,38 | 290 813,28 |
| | **Ընդամենը 5՝** | | | | **5 299 875,06** |
| | **6. Ներքին հարդարման աշխատանքներ** | | | | |
| 1 | Պատերի բարելավված սվաղ գաջե շաղախով | մ² | 1 589,80 | 3 851,88 | 6 123 725,77 |
| 2 | Թեքությունների բարելավված սվաղ գաջե շաղախով | մ² | 55,60 | 8 674,87 | 482 322,94 |
| 3 | Պատերի բարելավված սվաղ ցեմենտավազե շաղախով | մ² | 453,60 | 3 115,88 | 1 413 363,86 |
| 4 | Պատերի և շեպերի երեսպատում հախճասալերով, սոսնձով | մ² | 453,60 | 11 187,54 | 5 074 669,34 |
| 5 | Պատերի և թեքությունների բարձրորակ ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ | մ² | 1 645,40 | 2 744,02 | 4 515 017,56 |
| 6 | Պատի երեսպատում d=12.5մմ գիպսաստվարաթղթե սալերով, ցինկապատ պրոֆիլներից հիմնակմախքով | մ² | 12,00 | 7 179,91 | 86 158,94 |
| 7 | Նույնի բարձրորակ ներկում լատեքսային ներկով, ծեփամածկմամբ | մ² | 12,00 | 2 053,92 | 24 647,05 |
| 8 | Ձգվող առաստաղ, ներառյալ ամրացման | մ² | 524,80 | 10 186,70 | 5 345 978,52 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը 6՝ | | | | 23 065 883,97 |
| | Ընդամենը I՝ | | | | 43 373 261,67 |
| | II. Սառը ջրի ջրամատակարարման ցանց (Ջ1) | | | - | |
| 1 | Ծորակ-խառնիչ լվացարանի համար | կ-տ | 12,00 | 11 853,83 | 142 246,00 |
| 2 | Ճկուն փողրակ զուգարանակոնքի ջրամիացման համար 1/2" | հատ | 12,00 | 2 912,75 | 34 952,96 |
| 3 | 1 զույգ ճկուն փողրակ լվացարանի ջրամիացման համար 1/2" | հատ | 12,00 | 5 825,49 | 69 905,92 |
| 4 | Բրոնզե փական Փ15, PN10 | հատ | 12,00 | 3 234,55 | 38 814,65 |
| 5 | Պոլիէթիլենե խողովակ խմելու ջրի համար Փ25x2.3մմ, PN16 | մ | 11,00 | 3 990,09 | 43 891,00 |
| 6 | Նույնը, Փ20x2.3մմ, PN20 | մ | 40,00 | 4 931,43 | 197 257,17 |
| 7 | Պոլիէթիլենե խողովակների ձևավոր մասեր Փ25մմ, Փ20մմ | հատ | 80,00 | 179,70 | 14 375,80 |
| 8 | Խողովակների պոլիէթիլենե մեկուսացում Փ<sub>ներք</sub>=25մմ | մ | 11,00 | 1 266,89 | 13 935,79 |
| 9 | Նույնը, Փ<sub>ներք</sub>=20մմ | մ | 40,00 | 1 230,95 | 49 238,04 |
| 10 | Գնդիկավոր փական 0.5"F | հատ | 18,00 | 8 681,07 | 156 259,29 |
| | Ընդամենը II՝ | | | | 760 876,63 |
| | III. Կոյուղու ներքին ցանց | | | - | |
| | 1. Կոյուղու ներքին ցանց (Կ-1) | | | - | |
| 1 | Կյոյուղու ոչ ճնշումային ՊՎՔ խողովակներ DN110 | մ | 40,00 | 3 787,81 | 151 512,52 |
| 2 | Լոգարանային լվացարան սիֆոնով | կ-տ | 12,00 | 30 553,73 | 366 644,72 |
| 3 | Զուգարանակոնք ջրահեռացման ծալքավոր անկյունակով | հատ | 12,00 | 66 978,48 | 803 741,79 |
| 4 | ՊՎՔ մաքրիչ DN110 | հատ | 3,00 | 4 339,65 | 13 018,96 |
| 5 | ՊՎՔ եռաբաշխիչ 90⁰ DN110 | հատ | 10,00 | 3 656,80 | 36 568,03 |
| 6 | ՊՎՔ եռաբաշխիչ 90⁰ DN110/50/110 | հատ | 13,00 | 3 351,32 | 43 567,12 |
| 7 | ՊՎՔ անկյունակ 90⁰ DN110 | հատ | 7,00 | 2 452,32 | 17 166,24 |
| 8 | Գոյություն ունեցող կոյուղու ցանցի ապամոնտաժում | մ | 58,00 | 1 753,92 | 101 727,48 |
| 9 | Շինաղբի բարձում ա/ինքնաթափի վրա | տ | 0,40 | 3 310,37 | 1 324,15 |
| 10 | Տեղափոխում թափոնակույտ 5կմ | տ | 0,40 | 2 470,43 | 988,17 |
| | 2. Կոյուղու կանգնակ (Կգ Կ1-1) | | | - | |
| 1 | Կյոյուղու ոչ ճնշումային ՊՎՔ խողովակներ DN110 | մ | 18,00 | 3 787,81 | 68 180,63 |
| 2 | ՊՎՔ ստուգիչ DN110 | հատ | 4,00 | 4 339,65 | 17 358,61 |
| 3 | ՊՎՔ քառաբաշխիչ 90⁰ DN110/110/110/110 | հատ | 3,00 | 4 587,63 | 13 762,89 |
| | Ընդամենը III՝ | | | | 1 635 561,30 |
| | IV. Էլեկտրաուժային սարքավորումներ և էլեկտրալուսավորություն | | | - | |
| 1 | Էլեկտրական բաշխիչ վահան 36 մոդուլի, ներկառուցվող, ափանցիկ դռնակով, դիմային պանելով | հատ | 1,00 | 46 351,01 | 46 351,01 |
| 2 | Վահան 4 մոդուլի, արտաքին, թափանցիկ դռնակով, դիմային պանելով | հատ | 4,00 | 10 697,07 | 42 788,28 |
| 3 | Բեռի անջատիչ 3P, 63Ա | հատ | 1,00 | 11 768,26 | 11 768,26 |
| 4 | Բեռի անջատիչ 1P, 32Ա | հատ | 1,00 | 7 635,22 | 7 635,22 |
| 5 | Բեռի անջատիչ 1P, 25Ա | հատ | 2,00 | 7 009,13 | 14 018,25 |
| 6 | Դիֆերենցիալ հոսանքի ավտոմատ անջատիչ RCB 1P+N, C25Ա, 4.5kA, 30mA | հատ | 4,00 | 27 447,85 | 109 791,39 |
| 7 | Նույնը, RCB 1P+N, C20Ա, 4.5kA, 30mA | հատ | 8,00 | 24 033,59 | 192 268,76 |
| 8 | Ավտոմատ անջատիչ 1P, C6Ա, 4.5kA | հատ | 14,00 | 20 127,04 | 281 778,59 |
| 9 | Վարդակ միաֆազ, երկբևեռ, հողանցման հպակով, ներկառուցվող, 16Ա, IP20, պատի տեղակայման | հատ | 71,00 | 3 229,59 | 229 300,79 |
| | Լուսավորության անջատիչ մեկստեղն, 10Ա, | հատ | 43,00 | 2 837,47 | 122 011,19 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 11 | Լուսավորության անջատիչ երկստեղն, 10Ա, ներկառուցվող | հատ | 1,00 | 3 887,03 | 3 887,03 |
| 12 | Առաստաղին մոնտաժվող լուսատու ԼԵԴ լամպով 36վտ, 2400լյում, 4000K (IP20) | հատ | 90,00 | 18 320,37 | 1 648 833,60 |
| 13 | Առաստաղին մոնտաժվող լուսատու ԼԵԴ լամպով, կետային, 11վտ, 4000K (IP44) | հատ | 42,00 | 5 085,06 | 213 572,41 |
| 14 | ՎՎԳ$_{նգ}$ (A)-LS 3x4մմ² չհրկիզվող պղնձե մալուխ | մ | 191,00 | 3 669,49 | 700 872,33 |
| 15 | Նույնը, ՎՎԳ$_{նգ}$ (A)-LS 3x2.5մմ² | մ | 475,00 | 2 915,21 | 1 384 722,77 |
| 16 | Նույնը, ՎՎԳ$_{նգ}$ (A)-LS 3x1.5մմ² | մ | 745,00 | 2 640,27 | 1 967 000,20 |
| 17 | ՆՇՎԻ 4-12 մալուխի ծայրակալ | հատ | 145,00 | 248,64 | 36 053,04 |
| 18 | Wago 221-415 կլեմնիկ | հատ | 44,00 | 5 857,79 | 257 742,57 |
| 19 | Պվք ճկախողովակ D16 | մ | 20,00 | 448,26 | 8 965,27 |
| 20 | Սակառ էլեկտրական 15x10մմ | մ | 75,00 | 520,41 | 39 030,84 |
| 21 | Միացման տուփ 80x80x50մմ (IP54) | հատ | 44,00 | 1 723,96 | 75 854,40 |
| 22 | Անցքերի բացում պատերում և փակում D16 | հատ | 62,00 | 2 531,64 | 156 961,76 |
| 23 | Օդորակիչ ինվերտորային, պատին տեղադրվող (BTU), -36000 ջերմային հզորությամբ (10.5կվտ) (BALLU BSQ-36HN1) (100մ² տարածքի) | հատ | 1,00 | 980 892,61 | 980 892,61 |
| | **Ընդամենը IV՝** | | | | **8 532 100,55** |
| | **V. Գույք** | | | - | |
| 1 | Սանհանգույցներում օճառամանի տեղադրում | հատ | 12,00 | 2 059,49 | 24 713,92 |
| 2 | Սանհանգույցներում ձեռքի չորացման սարքի տեղադրում (թղթե) | հատ | 12,00 | 11 807,76 | 141 693,15 |
| 3 | Սանհանգույցներում զուգարանաթղթի կախիչների տեղադրում | հատ | 12,00 | 2 745,99 | 32 951,89 |
| 4 | Սանհանգույցներում հոտավետ սարքի տեղադրում | հատ | 6,00 | 5 491,98 | 32 951,89 |
| 5 | Սանհանգույցներում հայելիների տեղադրում 500x750մմ | հատ | 12,00 | 10 297,47 | 123 569,60 |
| 6 | Արխիվի սենյակի գրքերի պահարան՝ դարակաշարU 600x1600մմ (H=1800մմ), դարակների միջև բարձրությունը 350մմ | հատ | 6,00 | 164 759,47 | 988 556,84 |
| 7 | Լամինատե սեղան U-1 1800x565x800մմ(H) | հատ | 8,00 | 96 109,69 | 768 877,54 |
| 8 | Բացվող սեղանիկով աթոռ Թ-1 540x450մմ | հատ | 18,00 | 30 205,90 | 543 706,26 |
| | **Ընդամենը V՝** | | | | **2 657 021,10** |
| | **Ընդհանուրը՝** | | | | **56 958 821,25** |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**

ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114

/ստորագրություն/Կ.Տ
**Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ և «ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
**կոնսորցիում**
**«ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Տիգրան մեծի 32
Բանկը՝ «Ամիօբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 115001960299227
ՀՎՀՀ՝ 03017559
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1»**
ք. Հրազդան, ՔԱՂՍԻ 4 ԹՂՄ., 88.
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2476402233080000
ՀՎՀՀ՝ 03024889

/ստորագրություն/Կ.Տ
**ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ Հ. ԱՎԱԳՅԱՆ**

Հավելված թիվ 2
04 հունիսի 2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-3» ծածկագրով պայմանագրի

# ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 3 | Հրազդան խոշորացված համայնքի Հրազդան քաղաքի համայնքապետարանի շենքի ներքին աշխատասենյակների, դահլիճի ընդլայնման, սանհանգույցների հատակագծային լուծումների ձևափոխման և հարդարման աշխատանքներ | Վերանորոգման աշխատանքների, տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների ձեռքբերման համար կնքված պայմանագրերից (համաձայնագրերից) վերջինի ուժի մեջ մտնելու օրը | 120 օրացուցային օրվա ընթացում: |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**

ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1
վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114

/ստորագրություն/Կ.Տ
**Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ և «ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
**կոնսորցիում**
**«ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Տիգրան մեծի 32
Բանկը՝ «Ամիօբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 115001960299227
ՀՎՀՀ՝ 03017559
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1»**
ք. Հրազդան, ՔԱՂՍԻ 4 ԹՂՄ., 88.
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2476402233080000
ՀՎՀՀ՝ 03024889

/ստորագրություն/Կ.Տ
**ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ Հ. ԱՎԱԳՅԱՆ**

Հավելված N 3
24 հունիս 2025թ. կնքված
«ԿՄՀՔ-ԳՀԱՇՁԲ-25/20-3» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| ...րավերով ...ատեսված ...փաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Աշխատանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20- թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում* | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 3 | 45461100 | Հրազդան խոշորացված համայնքի Հրազդան քաղաքի համայնքապետարանի շենքի ներքին աշխատասենյակների, դահլիճի ընդլայնման, սանհանգույցների հատակագծային լուծումների ձևափոխման և հարդարման աշխատանքներ | | | | | | | | | |

...ճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն
...մանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:
...րավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**Հրազդանի համայնքապետարան**

ք.Հրազդան, Սահմանադրության հրապարակ 1 վարչական շենք
Հրազդանի ՏԳԲ
Հ/Հ 900122001465
ՀՎՀՀ 03027114

/ստորագրություն/Կ.Տ
**Ս.ՄԻՔԱՅԵԼՅԱՆ**

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1» ՍՊԸ և «ԱՆՆԱՐ» ՍՊԸ կոնսորցիում**
**«ԱՆՆԱՐ» ՍՊԸ**
ք. Հրազդան, Տիգրան մեծի 32
Բանկը՝ «Ամիօբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 115001960299227
ՀՎՀՀ՝ 03017559
**«ԱՎԱԳ ՇԻՆ 1»**
ք. Հրազդան, ՔԱՂՍԻ 4 ԹՂՄ., 88.
ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ
Հ/Հ 2476402233080000
ՀՎՀՀ 03024889

/ստորագրություն/Կ.Տ
**ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ Հ. ԱՎԱԳՅԱՆ**